Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է:

Այնուհետև փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը:

Խոսքը փոխանցվեց նախաձեռնող կողմի ներկայացուցիչ Դավիթ Բաբասյանին, ով ներկայացրեց դպրոցի ինժեներական լուծումների վերաբերյալ տեղեկատվություն:

Գյուլագարակ համայնքի համայնքապետ Խաչիկ Վարդանյանն առաջարկեց, որ դպրոցի համար նախատեսված տարածքում մի փոքր հատված ըստ պայմանավորվածության թողնեն որպես զոհվածների համար հիշատակի անկյուն, ինչն ընդունվեց նախագծողների կողմից:

Խոսվեց այն մասին, որ հատուկ ուշադրություն է դարձվել աղմուկի մակարդակին, քանի որ կից գործում է մանկապարտեզ:

Հնչեց հարց ջրի բերման աղբյուրի վերաբերյալ, ինչին նախաձեռնողը պատասխանեց, որ կառուցվելու է առանձին ջրագիծ, առանձին ջրաչափով:

Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ համայնքի մասնակիցները որոշեցին հավանություն տալ «Շին-Կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման աշխատանքներին:

««Շին-Կոմֆորտ»» ՍՊԸ ներկայացուցիչ

ШИН-КОМФОРТ
SHIN-KOMFORT
08420977

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան